Հավելված
ՀՀ կառավարության 2022 թվականի
դեկտեմբերի 8-ի N 1901-Ա որոշման

Ո Ր Ա Կ Ա Վ Ո Ր Մ Ա Ն Չ Ա Փ Ա Ն Ի Շ Ն Ե Ր

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱԷԿ-Ի ՆՈՐ ԴԻԶԵԼ-ԳԵՆԵՐԱՏՈՐԱՅԻՆ ԿԱՅԱՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՄՇԱԿՄԱՆ, ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ, ՇԻՆՄՈՆՏԱԺԱՅԻՆ ԵՎ ԹՈՂԱՐԿՄԱՆ-ԿԱՐԳԱԲԵՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ

Գործոն	**Մասնագիտական փորձառություն**				
	Չափանիշ				**Պահանջվող փաստաթղթերը**
	Պահանջ	**Մասնակից**			
		Մեկ կազմակեր-պություն	**Համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով), և/կամ ենթակապալառու(ներ)ի ներգրավմամբ մասնակիցներ (կոնսորցիումի անդամները և ենթակապալառուն(երը), այսուհետ՝ գործընկեր)**		
			Բոլոր գործընկերները միասին	**Յուրաքանչյուր գործընկեր**	

Փորձառություն	1. Մասնակիցը պետք է ներկայացնի հայտի ներկայացմանը նախորդող տասը տարիների ընթացքում իրականացված ԱԷԿ-ների միջուկային անվտանգության տեսանկյունից կարևոր (ըստ գնման մասնակցի իրավաբանական գրանցման և/կամ սարքավորման արտադրման և/կամ սարքավորման կիրառման երկրի նորմերի և կանոնների) սարքավորումների մատակարարման փորձ՝ ոչ պակաս, քան 10 000 000,00 ԱՄՆ դոլար (մեկ դիզել-գեներատորի մոտավոր արժեք) ընդհանուր արժեքով: (Հաշվի է առնվում միայն մասնակցի փորձառությունը, մասնակցի կողմից պայմանագրի կատարման համար ներգրավվող այլ իրավաբանական անձանց փորձը հաշվի չի առնվում):	Պետք է բավարարի պահանջին	Այն մասնակիցը, ով հանդիսանում է կոնսորցիումի առաջատար մասնակից և լիազորված է հանդես գալ կոնսորցիումի անունից և վարել ընդհանուր գործերը	-	«Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության ՀԱԷԿ-ի նոր դիզել-գեներատորային կայանի կառուցման նախագծի մշակման, անվտանգության հիմնավորման, սարքավորումների մատակարարման, շինմոնտաժային և թողարկման-կարգաբերման աշխատանքների կատարման գնման ընթացակարգի մասնակիցների որակավորումը հիմնավորող փաստաթղթի ձևանմուշ՝ համաձայն կից ներկայացվող օրինակելի ձևի: Ձևանմուշին կից մասնակիցը պետք է ներկայացնի համապատասխան պայմանագրերի պատճենները, ինչպես նաև այդ պայմանագրերի շրջանակներում պատվիրատուի (ով հանդիսանում է պայմանագրի առարկայի վերջնական սպառողը) կողմից տրված ապրանքների պատշաճ մատակարարման վկայականի կամ իր պատվիրատուի կողմից տրված պայմանագրի ավարտումը հավաստող այլ փաստաթղթի պատճենները:

					Պայմանագրերում պետք է հստակ արտացոլված լինեն ապրանքի տեխնիկական բնութագիրը, կատարման ժամկետները և պայմանագրի արժեքը՝ հիմնավորվող որակավորման մասով:
	2. Մասնակիցը պետք է ներկայացնի գնման ընթացակարգի շրջանակներում մատակարարման համար իր կողմից նախատեսվող դիզել-գեներատորների արտադրողների հետ պայմանագրային հարաբերությունների առկայության փաստաթղթային հիմնավորում, եթե մատակարարը չի հանդիսանում տվյալ դիզել-գեներատորների արտադրողը:	Պետք է բավարարի պահանջին	Պետք է բավարարեն պահանջին	-	Մասնակիցը պետք է ներկայացնի համապատասխան պայմանագրի պատճենը կամ տվյալ դիզել-գեներատորների արտադրողը հանդիսանալու հավաստումը:

	3. Մասնակիցը պետք է ներկայացնի հայտի ներկայացմանը նախորդող տասը տարիների ընթացքում ավարտված՝ ԱԷԿ-ի միջուկային անվտանգության տեսանկյունից կարևոր (ըստ գնման մասնակցի իրավաբանական գրանցման և/կամ սարքավորման արտադրման և/կամ սարքավորման կիրառման երկրի նորմերի և կանոնների) օբյեկտների նախագծման իր կամ ներգրավվող գործընկերոջ (կցելով գործընկերության պայմանագիրը) փորձառությունը հավաստող փաստաթղթային հիմնավորում:	Պետք է բավարարի պահանջին	Պետք է բավարարեն պահանջին	Պետք է բավարարի պահանջին՝ համատեղ գործունեության կամ կապալի պայմանագրով իրեն վերապահվող գործառույթի մասով:	«Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության ՀԱԷԿ-ի նոր դիզել-գեներատորային կայանի կառուցման նախագծի մշակման, անվտանգության հիմնավորման, սարքավորումների մատակարարման, շինմոնտաժային և թողարկման-կարգաբերման աշխատանքների կատարման գնման ընթացակարգի մասնակիցների որակավորումը հիմնավորող փաստաթղթի ձևանմուշ՝ համաձայն կից ներկայացվող օրինակելի ձևի: Ձևանմուշին կից մասնակիցը պետք է ներկայացնի համապատասխան պայմանագրերի պատճենները, ինչպես նաև այդ պայմանագրերի շրջանակներում պատվիրատուի (ով հանդիսանում է պայմանագրի առարկայի վերջնական սպառողը) կողմից տրված աշխատանքների ավարտման վկայականի կամ իր պատվիրատուի կողմից տրված պայմանագրի պատշաճ ավարտումը հավաստող այլ փաստաթղթի պատճենները: Պայմանագրերում պետք է հստակ արտացոլված լինի

					ծառայության տեխնիկական բնութագիրը (չնշելով գաղտնիք պարունակող տեղեկատվությունը)՝ հիմնավորվող որակավորման մասով:
	3.1. Մասնակիցը կամ ներգրավվող գործընկերը (կցելով գործընկերության պայմանագիրը) պետք է ներկայացնի շինմոնտաժային և թողարկման-կարգաբերման աշխատանքների կատարման փորձառություն հավաստող փաստաթղթային հիմնավորում:	Պետք է բավարարի պահանջին	Պետք է բավարարի պահանջին		Զևանմուշին կից պետք է ներկայացվեն համապատասխան պայմանագրերի պատճենները, ինչպես նաև այդ պայմանագրերի շրջանակներում պատվիրատուի (ով հանդիսանում է պայմանագրի առարկայի վերջնական սպառողը) կողմից տրված աշխատանքների ավարտման վկայականի կամ իր պատվիրատուի կողմից տրված պայմանագրի պատշաճ ավարտումը հավաստող այլ փաստաթղթի պատճենները:
	4. Մասնակիցը պարտավոր է ներկայացնել իր դրական ֆինանսական վիճակը հավաստող փաստաթուղթ (վերջին հինգ տարիների տարեկան շրջանառություն) և սակարկությունների անցկացման պահի դրությամբ բոլոր մակարդակի հարկերի գծով վճարման ժամկետանց պարտավորությունների բացակայության վերաբերյալ փաստաթուղթ:	Պետք է բավարարի պահանջին	Պետք է բավարարեն պահանջին	Պետք է բավարարի պահանջին	Մասնակիցը պետք է ներկայացնի ֆինանսական պարտավորությունների բացակայությունը հավաստող համապատասխան փաստաթղթեր:

	4.1. Անցած ժամանակահատվածի ֆինանսական գործունեությունը	Պետք է բավարարի պահանջը	Կիրառելի չէ (N/A)	Պետք է բավարարի պահանջը	Ներկայացնել աուդիտ անցած հաշվապահական հաշվեկշիռը կամ, եթե դա չի պահանջվում մրցույթի մասնակցի երկրի օրենսդրությամբ, այլ ֆինանսական հաշվետվություններ, որոնք ընդունելի են Գործատուի համար, վերջին հինգ [5] տարվա համար՝ հաստատելու մրցույթի մասնակցի ընթացիկ կայուն ֆինանսական վիճակը և նրա հեռանկարային երկարաժամկետ շահութաբերությունը: Իրացվելիության միջին գործակից ≥ 1.0 $\frac{\textit{Ընթացիկ ակտիվներ}}{\textit{Ընթացիկ պարտավորություններ}} \geq 1.0$
	4.2. Միջին տարեկան շրջանառությունը	Պետք է բավարարի պահանջի առնվազն յոթանասունհինգ տոկոսը (75 %)	Պետք է բավարարի պահանջին	Պետք է բավարարի պահանջի առնվազն հիսուն տոկոսը (50 %)	28 մլն ԱՄՆ դոլարի նվազագույն միջին տարեկան շրջանառություն՝ հաշվարկված որպես վերջին հինգ (5) տարվա ընթացքում իրականացվող կամ ավարտված պայմանագրերի համար ստացված հավաստագրված վճարումների հանրագումար

	4.3. Ֆինանսական ռեսուրսներ	Պետք է բավարարի պահանջի առնվազն յոթանասուն-հինգ տոկոսը (75 %)	Պետք է բավարարի պահանջին	Պետք է բավարարի պահանջի առնվազն հիսուն տոկոսը (50 %)	Մրցույթի մասնակիցը պետք է ցույց տա ֆինանսական ռեսուրսների հասանելիություն կամ առկայություն, ինչպիսիք են իրացվելի ակտիվները, չգրավադրված իրական ակտիվները, վարկային գծերը և այլ ֆինանսական միջոցները՝ բացառությամբ պայմանագրա-յին կանխավճարների, որոնք բավարարում են դրամական միջոցների հոսքի հետևյալ պահանջը՝ 14 մլն ԱՄՆ դոլար
	4.4. Պայմանագրի կատարման երաշխիք	Պետք է բավարարի պահանջին	Պետք է բավարարեն պահանջին		Մասնակցության հայտով ներկայացվում է հաստատ-ված հավաստում՝ ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, 10 աշխատանքային օրվա ընթացքում, պայմա-նագրի կատարման երաշխիք ներկայացնելու պարտավորու-թյան մասին՝ պայմանագրի 40% տոկոսի չափով: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի կատարման երաշխիք: Պայմանագրի կա-տարման երաշխիք ներկա-յացվում է կանխիկ փողի կամ բանկերի կողմից տրամա-դրված երաշխիքների ձևով: Ընդ որում պայմանագրի

					կատարմանը զուգընթաց կատարման երաշխիքը կարող է նվազեցվել՝ հասցնելով մինչև 10%, իսկ 10%-ի չափով երաշխիքը պետք է վավեր լինի առնվազն մինչև պայմանագրի կատարման արդյունքը պատվիրատուի կողմից ամբողջական ընդունվելու օրվան հաջորդող երաշխիքի ժամկետում:

Օրինակելի ձև

ՁԵՎԱՆՄՈՒՇ

«Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության ՀԱԷԿ-ի նոր դիզել-գեներատորային կայանի կառուցման նախագծի մշակման, սարքավորումների մատակարարման, շինմոնտաժային և թողարկման-կարգաբերման աշխատանքների կատարման գնման ընթացակարգի մասնակիցների որակավորումը հիմնավորող փաստաթղթի
(լրացվում է յուրաքանչյուր գործընկերոջ կողմից)

Մասնակցի անվանումը՝ _____ Ամսաթիվ_____

Որակավորումը հիմնավորող գործընկերոջ անվանումը՝ _____

Տեղեկություն		
Պայմանագրի անվանումը և համարը	_____	
Ստորագրման ամսաթիվ Ավարտման ամսաթիվ	_____ _____	
Դերը պայմանագրում	☐ Կապալառու	☐ Ենթակապալառու
Պատվիրատուի անվանումը՝	_____	
Գտնվելու վայրը՝ Հեռախոս/Ֆաքս՝ Էլ. փոստ՝	_____ _____ _____	
Մանրամասն ներկայացնել պայմանագրի շրջանակներում իրականացված՝ որակավորումը հիմնավորող աշխատանքները		

Մասնակից (լրացնել անվանումը) _____

(Լիազորված անձի անուն, ազգանուն, ստորագրություն, կնիք)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ Բ. ԲԱԴԱԼՅԱՆ

08.12.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ